

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ

Դիւանաս ճապոնուհու համար, ամենից երջանիկ միջոցը իւր հօր տանն եղած ժամանակն է: Ծնողները, քոյրերն ու եղբայրները նորան շրջապատում են սիրով և քնքշութեամբ ու կարեւրին չափ կատարում են նորա բոլոր ցանկութիւնները: Նա իւր հայրական տան մէջ ուրախանում է երեխայի նման և մեծ ազատութիւն է վայելում, քան ուրիշ ասիական երկրի աղջիկները: Երեսներին կարմիր գոյն քսած ու սպիտակ փոշի ցանած այդ աղջիկներին, աւելի շուտ խամաճուկներին (տիկ-նիկ) նայելիս, մարդ կարծում է թէ նոքա բոլորն էլ բաղտաւոր են: Նոցա ներկուած շրթունքների վերայ շարունակ խաղում է ուրախ ժպտը. նոցա սև սև, նիզիկ աչքերը ուրախ ու զուարթ նայում են Աստուծոյ ստեղծած աշխարհի վերայ և մինչև անգամ ամուսնանալուց յետոյ էլ նոքա մի որոշ ժամանակ մնում են դարձեալ նոյն երեխաները և զանազան խաղեր են խաղում իրանց փոքրիկ քոյրերի ու եղբայրներէ հետ:

Հագիւ աղջիկը հասնում է հարսնացուի հասակին և ահա ծնողներն սկսում են իրար անցնել, որ որքան կարելի է շուտ մարդու տան նորան: Բայց հագիւ է պատահում, որ աղջկայ ծնողներն իրանք միջամտեն որ և է փեսացուի համար, այլ սովորաբար մի երիտասարդ տղայ, որն ուզում է պսակուել, դիմում է իւր ամուսնացած ընկերներից մէկին, որ նա ծանօթ «մուսմէ»-ների (օրիորդ) շրջանի միջից, մի յարմար հարսնացու ընտրէ և աղջկայ ծնողներին առաջարկութիւն անէ: Օրիորդի հայրն ու մայրն էլ իրանց կողմից սկսում են տեղեկութիւն հաւաքել տղայի որակիւթեան և նիւթական ապահովութեան մասին և եթէ համաձայն են նորան տալու իրանց աղջկան, այնուհետև հնարաւորութիւն են տալիս, որ երիտասարդները միմեանց հետ տեսնուին, ծանօթանան:

Հարսնացուի և փեսացուի հանդիպումը կատարւում է առհասարակ միջնորդի տանը, կամ թատրոնում կամ թէ մէկ

ուրիշ ծանօթի մօտ: Հարսնացուն համաձայն է թէ ոչ այդ քայլին անհիշու, այդ մասին այնքան էլ չեն հոգում, և պէտք է աւած, նա ինքն էլ շատ անտարբեր է դէպի այդ հարցը. «մուսմէն» լաւ գիտէ, որ ամուսնութիւնից խուսափել չի կարող, ինչպէս որ մահից, և այդպիսի դէպքերում նա երկու հարեաց փոքրագոյնն է ընտրում. այսինքն այնպիսի մի մարդ է առնում, որ գոնէ զգուանք չզգայ դէպի նա: Աւելի ջերմ համակրութիւն ու սէր նորանից չի էլ պահանջուում, ամենակէն, եթէ տղային դուր եկաւ օրիորդը, գործը ձեռաց սարքում է. չէ՞ որ տղան ոչ մի կորուստ չի ունենայ, քանի որ ամուսնանալուց մի քանի ամիս յետոյ կարող է երիտասարդ կնոջն առանց որևէ ձևականութեան դարձեալ յետ ճամբել հէրանց տուն:

Երիտասարդն իւր նշան իւր հաւանութեան, ուղարկում է օրիորդին մի մետաքսէ կտոր, որ մեր մատանիների նշանակութիւնն ունի. հարսնացուի ընտանիքն էլ փոխադարձ ուղարկում է փեսացուին դարձեալ մետաքսէ կտոր «կիսմօնօ»-ի (խալատ) համար: Դորանից յետոյ սկսում են հարսանիքի պատրաստութիւն տեսնել, որ ճապոնիայում ընդունուած չէ շատ ձգգձգել և ահա փեսացուի ընկերները գնում են գուշակի մօտ, որ նա մի բաղտաւոր օր ընտրէ երիտասարդների հարսանիքի համար և այդ նշանակուած օրը, երեկոյեան, հարսնացուն գնում է իւր փեսացուի տուն:

Ճապոնիայում ամուսնութեան համար ոչ մի կրօնական ծէս կամ քաղաքացիական ձևականութիւն գոյութիւն չունին. ամբողջ կարգը կայանում է միայն նորանում, որ աղջիկը հօր տանից տեղափոխուում է իւր ապագայ տունը:

Աղջկայ բոլոր օժիտը բաղկացած է նորա հագուստեղէնից, գրասեղանից, ձեռագործի զամբիւղից, մի արկղիկից, որի մէջ պարունակուում են երեսին քսելու ներկեր ու օծանելիք և էլի երկու հացի սեղանից ու երկու ափսէից, որ շինուած են փայլուն, յղկած, փայտից: Քանի հարուստ լինին աղջկայ ծնողներն, այնքան շատ են տալիս նորա օժիտը: Եթէ հօր տան մէջ աղջիկն ունենայ իւր յատուկ աղախինը, այս վերջինս նորա հետ միասին գնում է փեսայի տունը:

Հարսանիքի գիշերը հարսնացուն սպիտակ զգեստ է հագնում, որ ճապոնացոց մէջ սգի գոյն է համարւում. սա նշան է, որ աղջիկն այդ օրուանից մեռած է համարւում իւր ընտանիքի, սիրելիների համար: Հէնց որ նորահարսը հօր տանից դուրս է դնում, սկսում են ամբողջ բնակարանը մաքրել ու կարգի բերել, իսկ առաջուան ժամանակները, նորահարսը հօր

տանից դուրս գալուն պէս, խարոյկ էին վառում, ինչպէս որ այդ անում են տանից մեռելը դուրս բերելիս:

Երբ նորահարսը միջնորդի և նորակնոջ հետ մտնում է նորափեսայի տունը, իսկոյն հանում է իւր սպիտակ հալաւը և հագնելով գեղեցիկ, մետաքսէ երփներանգ «կիսօնօ» մտնում է փեսայի սենեակը, ուր մի դեռահաս «մուսմէ» բրնձից պատրաստուած գինի է տալիս՝ առաջ հարսին խմելու և ապա փեսային ու այդ խմելէն երեք անգամ իրար ետևից առաջարկելուց յետոյ ամուսնութեան կարգը բոլորովին հաստատուած է համարւում: Ոչ մի ազգի մէջ ամուսնութիւնն այդպէս հասարակ ու անպաճոյճ չի կատարւում, ինչպէս որ Ճապոնիայում:

Միևնոյն միջոցին միւս սենեակում հաւաքւում են նորապսակների մօտիկ ազգականները և շատ ուրախ ժամանակ են անցկացնում: Փեսայի ընտանիքը և տան ծառաները շատ լաւ տրամադրութեան մէջ են, որովհետև նոքա բոլորը, նոյն իսկ կառապանները, ձիապանները հարսի ծնողներից ընծաներ են ստանում: Ճապոնիայում էլ, ինչպէս և մեզանում, սովորութիւն կայ, որ հիւրերը, հարսին ու փեսային ընծայ են տալիս. ընդհանրապէս այդ նուէրները լինում են տնային պարագաներ և հագուստի համար կտորներ: Թանգազին ակնեղէն, զարդ, զարդարանք չեն տրւում, որովհետև ճապոնուհիք չեն գործածում: Հարսանեաց հիւրերը վայելում են զանազան տեսակ քաղցրեղէն ու «սակէ» (բրնձից պատրաստուած գինի) մնում են մինչև ուշ գիշեր: Երգչուհիներն ու պարողները, որ կոչւում են «գէյշի» բոլոր ժամանակ զբաղեցնում են հիւրերին իրանց պարերով ու «սամիզէնի» (ճապոնական գիտար) վերայ նուագելով:

Երբ արդէն հիւրերը հեռանում են, մէկ օրիորդ մօտենում է հարսին ու փեսային և տանում է նոցա համար յատուկ պատրաստուած սենեակը: Նոքա այնտեղ նորից երեք անգամ խմում են երեք գաւաթների մէջ լցուած «սակէ»-ն, բայց այս անգամ փեսան է առաջինը խմում: Դորանից յետոյ նոքա արդէն մարդ ու կին են և միակ ձևականութիւնը, որ պարտաւոր է կատարել հարսի հայրը, այդ այն է, որ նա պէտք է ուստիկանական բիւրօյին յայտնէ, թէ իւր աղջիկն այլ ևս իրան տանը չի ապրում, այլ տեղափոխուել է ամուսնու տուն:

Հարսանիքի երրորդ օրը, հարսի հօր տանը մեծ ընդունելութիւն է լինում հիւրերի և այդ օրն էլ փեսայի ազգականներն են փոխադարձ ընծաներ տանում հարսի ընտանիքին: Իսկ նորապսակ զոյգը, վաղուց ընդունուած սովորութեան հա-

մեմատ, ամուսնանալուց երկու երեք ամիս յետոյ մեծ խնջոյք են սարքում իրանց տանը, կամ ճաշ կամ թէ զբօսանք պարտեզում, և բոլոր թանօթներն անխտիր հրաւիրւում են: Եւ հիւրերից շատերն այդ ժամանակ են միայն իմանում նոցա ամուսնութեան մասին, քանի որ այնտեղ սովորութիւն չկայ ոչ նշանի, ոչ էլ հարսանիքի մասին իմաց տալու: Առհասարակ ճապոնիայում հարսանիքին ու ամուսնանալուն այնքան մեծ նշանակութիւն չեն տալիս, ինչպէս որ մեզանում:

Ճապոնիայում կնոջ վերայ նայում են իբրեւ գլխաւոր աղախնի վերայ. այդ պատճառով ծանօթների համար միեւնոյն է, թէ ով ում հետ է ամուսնանում: Իսկ հասարակական դիրքը երբէք կնոջ համար ուշադրութեան չի առնւում, ուրեմն երիտասարդ կնոջ նոր կեանքի մէջ ոչ մի փոփոխութիւն չի մտնում այդ շտեմակէտից: Տղամարդու վիճակը դարձեալ առաջուայ պէս է մնում, ինչպէս որ ամուրի ժամանակ. ոչ մի պարտականութիւն կամ սահմանափակում նա յանձն չի առնում ամուսնանալուց յետոյ: Նա կարող է ամեն զիշեր տանից դուրս ժամանակ անցկացնել. նա իրաւունք ունի տան մէջ պահելու ուրիշ կանանց իբրեւ հարճեր. նորանից ոչ սէր և ոչ էլ հաւատարմութիւն է պահանջւում դէպի իւր օրինաւոր կինը: Բայց թէ նոյն այդ մարդու կինը պարտաւոր է հնազանդ լինել նորան ամեն մէկ մանր բանի մէջ, պիտի շարունակ հոգ տանի նորա մասին, կերակուրն եփէ, նորա շորերը կարէ, տան մէջ մաքրութիւն, կարգ ու կանոն պահպանէ և այլն: Իսկապէս նա այն է կատարում տան մէջ, ինչ որ աղախինը Եւրոպայում ամուրի տղամարդու մօտ. միայն այն զանազանութեամբ, որ աղախինն ամսական վարձ է ստանում և կարող է ամեն բոլոր թողնել իւր տեղն ու պաշտօնը, այն ինչ ճապոնուհին ամբողջ կեանքում ծառայելու է իւր ամուսին-իշխանաւորի մօտ և որպէս զի ցոյց տայ, թէ ինքը կամաւոր կերպով համաձայն է տանելու այդ դրութիւնը և չի էլ մտածում իւր վիճակի բարւոքման մասին, նա մարդու գնալուց յետոյ տգեղացնում է ատամները սև ներկելով ու յօնքերը գերծելով: Մեծ քաղաքներում այժմ այդ սովորութիւնն անհետանում է, բայց թէ գաւառներում ու գիւղերում եւ շատ կանանց եւ տեսել սև ատամներով, ասում է Հէսսէ Վարտէզը:

Ճապոնիայում տիրող այդ բոլոր վերոյիշեալ սովորութիւններն անշուշտ երոպացի կնոջ զայրոյթը կը շարժեն և կարեկցութիւն կը զարթոնի նորա սրտում դէպի ճապոնուհին. մանաւանդ որ այս վերջինս յանձն է առնում ամուսնական

ծանր լուծը առանց սիրոյ, առանց խաչեղբոր և առանց հարսանեկան ճամբորդութեան:

Ճապոնիայի ստորին դասակարգի մէջ աւելի ևս վատ են այդ ամենը.—մշակները, «կուլինները» (կառապան) ծառաները, դոքա բոլորն ամուսնանում են նոյն իսկ առանց հարսանեաց ճաշի ու առանց «սակէ» խմելու արարողութեան: Նոքա իրանց յարմար մի կնոջ հետ ամուսնանում են և շուտով էլ փոխում են նորան մէկ ուրիշի հետ, ինչպէս որ մենք փոխում ենք մեր շորերը: Եւրոպացիներից շատերը, որոնք ապրում են Ճապոնիայում, գործից տուն վերադառնալիս, զարմանքով լսում են «բօեայ»-ից (ծառայ) կամ «բետտօ»-ից (ձիապան), որ նոքա հէնց նոր ամուսնացան:

Թէև մարդ ինչքան բարձրանայ վեր հասարակական սանդղակներով, այնքան հազուադէպ է տեսնում կին փոխելը, կամ ինչպէս մեզանում ասում է ամուսնալուծութիւնը, յամենայն դէպս, նոյն իսկ այն քաղաքներում, որտեղ երոպական կուլտուրան ներս է թափանցել, դարձեալ երեք ամուսնութեանը մէկ ապահարզան է ընկնում և դեռ այդ չափն աւելի կըլինէր, եթէ որ հարուստ դասակարգը չունենար իւր պատճառները, որոնց հիման վերայ նա հազուադէպ է տալիս իւր կնոջն ապահարզան: Այդ, ի հարկէ, առաջ է գալիս ոչ այնքան բարոյական տեսակէտից, կամ թէ սիրուց ու յարգանքից դէպի կինը, այլ այն բանի շնորհիւ, որ այդ դասակարգի մարդիկ քիչ—շատ իւրացրել են երոպական գաղափարը դէպի կինը և չեն հաւատնում, որ ու է չնչին պատճառով կինը վռնդում է տանից: Բացի այդ էլ, նոցա կանայք բարձր շրջանի, արիստօկրատիայի, զաւակներ լինելով, չեն կամենայ կնոջ ազգականների թշնամացնել: Թէև ամեն մարդ, իւր միջոցին համեմատ, դարձեալ պահում է 2—3 կին. սովորաբար նոքա ապրում են նոյն տան մէջ, օրինաւոր կնոջ հետ և նոցա ապօրինի երեխաներն էլ մեծանում են առաջին կնոջ երեխաների հետ միասին:

Տօկիօ մայրաքաղաքի պրօֆէսոր Չէմբէրլէն, որ արդի Ճապոնիան լաւ է ուսումնասիրել, ասում է իւր մի աշխատութեան մէջ. ապահարզանի պատճառներն են անհնազանդութիւնը, երեխայ չունենալը, նախանձոտութիւնը, անբարոյական լինելը, բորոտութիւնը, կամ ուրիշ անբուժելի ցաւերը, շատախօսութիւնը և գողութիւնը: Մէկ խօսքով այդ եօթ պատճառից մէկն էլ բաւական է, որ մարդն ազատուի իւր կնոջից, եթէ յոգնել է նորանից:

Ճապոնիայի „japan Mail“ լրագիրը, որը կառավարութիւ-

նից նպաստ է ստանում, իւր համարներից մէկում գրում է. «Եթէ խիստ դատելու լինենք, բազմակնութիւնը Ճապոնիայում այժմ գոյութիւն չունի. իսկապէս բազմակնութիւնն երբեք օրինական չէ եղել, քանի որ օրէնքը միայն մէկին է ճանաչում: Ի պատիւ աստիճանաւորների, արիստոկրատիայի և նշանաւոր առևտրական դասի պիտի նկատել, որ նոցա մէջ, շատ քիչ բացառութեամբ ապօրինի կին պահելը բոլորովին վերջացած է: Բայց արդեօք հասարակական կարծիքը բաւականաչափ հասունացած է, որ հարձ պահելը յանցանք համարուի, այդ հարցին լրագիրը պատասխանել չի կարողանում:

Ճապոնիայում երբեմն միայն պատահում է, որ աղջիկն ինքն իրան յօժար կամքով ամուսին է ընտրում: Օրինակի համար, եթէ ծնողները տղայ ժառանգ չունին, հօր համար դասի մեծ դժբախտութիւն է համարւում, որ չկայ մէկը իւր անունն ու գործերը ժառանգող և իւր նախնիքների համար զոհեր մատուցանող: (Ճապոնիայում միայն տղամարդը կարող է աղօթել ու զոհ մատուցանել իւր նախնիքի համար): Ահա այդ իսկ պատճառով հայրն աշխատում է իւր ծանօթների շրջանի միջից ի նկատի առնել այնպիսի մէկին, որ իւր անդրանիկ աղջկան համապատասխան լինի և այդ դէպքում միշտ հարցնում է աղջկայ կարծիքն ու խորհուրդը, թէ արդեօք իւր հաւանած երիտասարդը բաւական գեղեցիկ և խելօք է, նորա ապագայ ամուսինը դառնալու համար: Եւ թէ որ աղջկան դուր գայ հօր ընտրած տղան, հարսանիքն էլ շուտով գլուխ է գալիս: Բայց այդպիսի դէպքերում աղջկայ մարդը նոյն խղճալի դերն է կատարում, ինչ որ ճապոնուհիք իրանց ամուսինների տներում: Այդ տնփեսան պէտք է հրաժարուի իւր ազգանունից և կնոջ ազգանունն ընդունէ, պէտք է տեղափոխուի աներոջ տունը և իրան շատ հեզ ու խոնարհ պահէ, այլապէս նա շատ հեշտութեամբ կը վռնդուի այդ տանից: Ի հարկէ, այդպիսի դեր կարող են յանձն առնել միայն շատ աղքատ, անտուն, անտէր երիտասարդները:

ՏԻՐ. ԿՈՍՏԱՆԵԱՆ